13 ապրիլի 2017 թվականի N 371 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 175-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի «Անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» N 175-Ա որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ կետերով.

«

25.	«Երևանի N 49 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	քաղ. Երևան, Նոր Արեշի 5-րդ փողոց, N 2ա	«Երևանի Էրեբունու շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	քաղ. Երևան, Նոր Արեշի 5-րդ փողոց, N 2	410.34	81 600 000
26.	«Երևանի Ռաֆֆու անվան N 36 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	քաղ. Երևան, Կոմիտասի 37	«Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	քաղ. Երևան, Կոմիտասի պ. 37	366.60	117 000 000
27.	«Երևանի Ղ. Ալիշանի անվան N 95	քաղ. Երևան, Նուբարաշեն	«Երևանի Նուբարաշենի շախ-	քաղ. Երևան, Նուբարաշեն 13	114.6	21 000 000

	միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	13 փողոց	մատի մանկա-պատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	փողոց		
28.	«Երևանի N 157 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	քաղ. Երևան, Նորքի 11 փողոց, N 62	«Երևանի Նորք-Մարաշի շախ-մատի մանկա-պատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	քաղ. Երևան, Նորքի 11 փողոց, N 62	234.31	40 950 000
29.	«Երևանի Հ. Դինքի անվան N 44 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	քաղ. Երևան, Մ. Ավետիս-յան 89	«Երևանի Քանաքեռ-Զեյթունի շախմատի ման-կապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	քաղ. Երևան, Մ. Ավետիսյան 89	373.65	69 500 000

»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում հանրակրթական դպրոց հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել սույն որոշումից բխող անհատույց օգտագործման պայմանագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրեր՝ սահմանելով, որ համաձայնագրերից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո վեցամսյա ժամկետում համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված տարածքների անհատույց օգտագործման պայմանագրեր՝ սահմանելով, որ պայմանագրերից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ համապատասխան համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ